№ 4 ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 1884 ԹՐԻՓՈՐԴ ՏԱՐԻ 18 ՅՈՒՆՎԱՐԻ

Հրատարակումն շաբաթը 1—3 անգամ։

Տարեկան բաժանորդագինն է երևանում 1 րուբ.

Խմբագրատունը բացէ 2—5 ժամը կէս-օրից յետոյ։

Յայտարարութիւնները ընդունվում են հայերէն, ռուսերէն և թուրքիերէն լեզուներով։

ԵՐԵՒԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յայտարարութիւնների համար վճարվում է իւրաքանչիւր բառին 2 կոպ. — միանգամ, 3 կոպ. — երկու անգամ, իսկ մնացած անգամների համար պիտի աւելացնել կէս կէս կոպեկ։

Խմբագրատունը գտնւում է, երևանում Աստաֆեան և Ռէհրութեան փողոցների անկիւնում Էմին տէր Գրիգորեանցի տապանում։

ԼՈՒՐԵՐ

Ամսոյս 10-ից կանոնաւոր կերպով սկսեց գուրս գալ նոր „ՆՈՒ-ԳԱՐ“ ամենօրեայ լրագիրը և խմբագրութիւնս արդէն ստացաւ 1 — 4 համարը։ Տարեկան գինն է 10 րուբլի։ Ի սրտէ կը ցանկանք յաջողութիւնն

—

Մանաւանդ, բայց հատատուն աղբիւրներից տեղեկանում ենք, որ պօլառւմ ազգային ժողովը քուէարկել է կաթողիկոսական ընտրելներին և քուէարկութեան հետևանքն եղել է այն, որ պատրիարքը ստացել է 98 ձայն, իսկ Մակար եպիսկոպոսը 30 ձայն, սակայն միևնոյն տեղեկութիւնը հաստատում է, որ ս. Նիսանը կը հրաժարուի և կը ճնան ընտրվի Մակար եպիսկոպոսը և էջմիածնի նախկին Առաջնորդ Ցարութիւն եպիսկոպոսը, որոց մինը կը լինի անշուշտ կաթողիկոս։

—

Երկու անգամ է, որ երևանում փոշտա չէր ստացւում Սևանայ լճի ափերքի ճանապարհին ձիւնի ահագին կոյտեր թափելու պատճառաւ։ Վերջապէս օրուայ փոշտը ստացուեցաւ։

—

Ստացանք „Աղբիւրի“ 1 համարը նորկայ թուի։

—

Մշակը ամսոյս 10-ից հրատարակուելու և երևանում ստացուելու 4 համարը միանգամից ուշացումով թիւան արժանի են 1 և 3 համարները առաջնորդողները։

—

Մեր դէմ կարծիք յայտնողների ուշադրութիւնը դարձնում ենք թերթիս առաջին համարում տպած մեր սկզբունքի, մեր նպատակի մասին, որոնց և միանգամայն հասած ենք։ Ապացոյցներ կան։ — Ուրեմն ասելիք չէ կարելի ասել, մեր թերթն ևս ունի իւր նշանակութիւնը. միթէ այն ժամանակ կլիներ միայն նշանաւոր, որ մեր պրօգրամի հաղար ու մի կտորներից կազմուած լիներ կամ միթէ մենք այս գործը սկսեցինք միայն խմբագիր-հրատարակիչ լինելու համար. — ո՛չ, մենք կամեցանք միայն կարգացնել մեր հասարակ դասակարգին, իր ճաշակին յարմար կերպարքերով։ Ի պատրաստել նորան աւելի համեղ, աւելի, անընդարար կերակուրների, օրք ...ից, ...ից շքեղ պատրաստուում են, բայց ախտոս որ ... շատ քչերի համար։ կարգացէք դուք փիլիսոփայութիւն մի անծանօթ հասկի համար, կարդացէք նաև մի անիմաստ, բայց ծիծաղաշարժ անեկդոտ նորա մօտ, ու տեսէք թէ որը խանութեամբ կլսի և կմրռնի նա, կամ այդպիսի գրուածքներից դէպի որը կձգուի նա կարդալու։ — Մենք էլ տալիս ենք այդպիսիներին վերջինը, որ ժամանակին պատրաստենք առաջինի համար։

Այժմ, պէտք է խոստովանել, որ „Մշակը“ թերթիս անցեալ տարուայ հենց առաջին համարը դուրս գալուն պէս՝ հասկացաւ մեր սկզբունքը. այն սկզբունքը, որը շատ նեղ շրջանակով սահմանափակուած է և նպատակայարմար։ Է. Տ. Գ.

ԱՆԿԱՏՈՂՆԵՐ ԵՒ ԾԻԾԱՂԱՇԱՐԺ ԶՐՈՅՑՆԵՐ

Լանգթամուրը շատ խելօք, սրտամիտ, արդարադատ և ողորմած թագաւոր էր, բայց բնաւ թիւնը նրան կերպարանքով հրէշ էր ստեղծել. մի աչքով կոյր, քիւրծ երկար ու ծուռ, ականջի մէկը մեծ, աջ թուշը վերքա-

շուած, ահ, միրուքը երեք չորս մազից, կաղ և այլն և այլն։ Մի օր սափրիչը նորա գլուխը վեր էր անում այլ տեղ կանգնած էր և թագաւորի գլխաւոր վազերը։ Սափրիչը իւր գործը վերջացնելուց յետոյ, հայելի թագաւորին տուց. թագաւորը նայեց, նայեց իրեն հայելու մէջ և սկսեց լալ...

— Տէր Աստուած, ասաց, ես այսպէս խելօք, աշխարհի մէջ անուն հանած մարդ, այս ինչ կերպարանք է, որ դուք ինձ տուել եաւ

Այս լսելուն պէս վազիրը սուել շատ սկսեց լալ։

— Վազիր, դուք ինչու ես լալիս։ Թէ իմ լացիս պատճառը՝ քեզ շատ լաւ յայտնի է։

— Թագաւորը սաղ լինի, պատասխանեց վազիրը, դու դեռ ամիսը մի անգամ ես քո կերպարանքը տեսնում և այդպէս լալիս, ապա իմ լացիս վերջ կարո՞ղ է լինել, որ ամենայն օր տեսնում եմ քո կերպարանքը։ Գող.

* * *

— Ինչ անեմ, որ ամեն գիտութիւն էլ իմանամ։

— Սովորիր, պարապիր, աշխատիր...

— Է՜, էլ ա փիսն է։ Ուրիշ հնարք չկայ։ Մրջաղէ։

ՕԴԱՅՈՑ

14 ին ՅՈՒՆՎԱՐԻ		
Առաւօտ	կէս օր	Երեկոյ
արև		
Ըէօամիւրի ջերմաչափով		
—5	+1	—0
15 և 16 ին ՅՈՒՆՎԱՐԻ		
Առաւօտ	կէս օր	Երեկոյ
ամպ և արև		
Ըէօամիւրի ջերմաչափով		
—5	+1	—2
17 ին ՅՈՒՆՎԱՐԻ		
Առաւօտ	կէս օր	Երեկոյ
ամպ և արև		
Ըէօամիւրի ջերմաչափով		
—8	—	1 —3

Պատիւ ունեմ յայտնել Երեւանայ յարգելի հասարակութեանը, որ ես առաջիկայ փետրվարի ամսի 1-ից ընդունում եմ իմ վերայ գնել կօմիսայիով Տփխիսից ապրանք և Երեւանից ընդունել Տփխիսում ծախելու համար:

Կօմիսիօնական վճարը պիտի լինի. Տփխիսից մանեթին ՄԻՆԿ կոպ., իսկ Երեւանից մանեթին ԵՐԿՈՒ կոպ.

Առանձին պայմանների համար ցանկացողները կարող են դիմել ինձ այս օրուանից մինչեւ Յունվարի 25ը:

Տփխիսում հարցնել ինձ Երծրունու քարվանսարայում:

Կարապետ Գէորգեան Բարոյեանց:

Ծախում եմ

Իմ կանդիտերսկայան իւր բոլոր պատրաստներով, վառելու փայտով, մեբելով մի արաբայ անձուղով և այլն ամենաէժան գնով:

Յանկացողները պիտի դիմեն իմ խանութը:

Անգրիաս Տէր Ասատուածատրեան:

„ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ“

Ամսագիրը պիտի հրատարակուի 1884 թուին յունուար ամսից, գլխ. խմբագրութեամբ մանկավարժական ուղղութեամբ:

„ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ“ կը հրատարակուի ամիսը մի տետրակ 2 թերթից, տարեկան 10 տետրակ (ամառվան արձակուրդին յուլիս, օգոստոս ամիսներում չի հրատարակուի):

„ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ“ իւրաքանչիւր տարեկան գինն է 3 մանեթ:

Մինչեւ Յունվար ամիս ստորագրողներին Յունվարի 1-ին կուղարկվի մեր յօրինած պրօգրամների դրքոյկը:

Ամենայն պահանջ եւ խնդիր ուղղելու է այս հասցէով, Эчміадзинъ Редакція МАНКАВАРЖАНОЦЪ

Խմբագրող — Հրատարակող

Խոյէն Ա. Լուլէ. Սահակեանէ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ
„ՄՇԱԿ“
ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻ
(ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)
ԱՌԱՋԻԿԱՅ 1884 ԹԻՒՆ
ԿԸ Հրատարակվի նոյն դիւքով և նոյն պրօգրամայով:

ՊՐՕԳՐԱՄ

I. ՏԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ: II. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ: III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ: VI. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ: VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ֆելիետօն, վէպեր, ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ գիտութեան ամեն ճիւղերից, քը թակցութիւններ: VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԲԱԺԱՆՈՐԴԱՏԻՒ: Տարեկան 10 րուբլ. վեց ամսվայ 6 րուբլ. իւրաքանչիւր ամսվայ 1 րուբլ:

ՀԱՏՈՒԿ համարները 5 կոպէկ:

ՀԱՍՑԷՆ. Тифлисъ, редакція «Мшакъ»

Խմբագիր — Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

СЪ 1-ГО ЯНВАРЯ 1884 ГОДА
ВЪ ТИФЛИСѢ БУДЕТЪ ИЗДАВАТЬСЯ
НОВАЯ ЕЖЕДНЕВНАЯ (350 НУМЕРОВЪ ВЪ ГОДЪ) ЛИТЕРАТУРНО - ПОЛИТИЧЕСКАЯ ГАЗЕТА
„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“
подъ редакціею А. В. СТЕПАНОВА (бывш. редакторъ „ЮРИДИЧЕСКАГО ОБОЗРѢНІЯ“).

Объемъ газеты—печатный листъ средняго формата; программа—общая всемъ литературно—политическимъ ежедневнымъ изданіямъ.

Подписная цѣна съ пересылкою и доставкою: на годъ—10 р. 5.; на 6 мѣс.—6 р., на 3 мѣс.—3 р. 50 к., на 1 мѣс.—1 р. 50 к.

Подписка (городская и иногородная) и объявленія (по 5 коп. за строку петита) принимаются Въ Тифлисѣ исключительно въ Газетномъ Агентствѣ В. Шаврова; въ С.-Петербургѣ-же и Москвѣ—въ книжныхъ магазинахъ „Новаго Времени“.

Временное (до 15-го декабря) помѣщеніе редакціи: Давидовская ул., д. Кананова, квартира редактора.

За газетой обезпечено постоянное сотрудничество: кн. К. А. Бебутова, Вс. М. Гаршина, П. А. Измайлова, С. Н. Кривенко, Н. Я. Николадзе, П. А. Опочинина, А. Н. Плещеева, И. Ф. Тхоржевскаго, Гл. И. Успенскаго, Н. А. Шаврова.

Խմբագիր—Հրատարակիչ ԷՄԻՆ ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

Дозволено цензурою 17 Января 1884 года. гор. Эривань

Типографія ЭминаТеръ—Григорянцъ.